ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N207-Ա
« 30 » ՀՈՒԼԻՍԻ 2025Թ.

ԱՂՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 30-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի «Քաղաքացիական ծառայողին արձակուրդ տրամադրելու կարգը և պայմանները սահմանելու մասին» N1287-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ, 5-րդ, 9-րդ կետերով և հիմք ընդունելով Աղվան Հարությունյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2025 թվականի օգոստոսի 4-ից մինչև 15-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Աղվան Հարությունյանին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Աղվան Հարությունյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրա պարտականությունների կատարումը դնել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Սրբուհի Դավթյանի վրա:
3. Աշխատանքի ներկայանալու ժամկետը՝ 2025 թվականի օգոստոսի 18-ին:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր